

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾԵԾԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Մի երիտասարդ ուսուցից նոյն այս վերնագրով մեզ մի յօդուած է ուղարկել և պարտաւորեցնում է մեզ, որ այդ խնդրի մասին մեր կարծիքը յայտնենք հրապարակաւ: Յօդուածը շատ հետաքրքրական երևեցաւ մեզ ոչ թէ խնդրի լուծմամբ, այլ այն անկեղծ խոստովանութեամբ, որ շատ դժուար բան է եղել հայ ուսուցչի համար, երբ որ խնդիրը ծեծի մասին է:

Ամենքը ասում են, թէ ծեծ հարկաւոր չէ, բայց ամենքը ծեծով են տեսնում իրանց գործը, ուստի իրաւամբ բացականջում է երիտասարդ ուսուցիչը. «Եւ Դպրոցներու ծեծի վերայնէլ մնում է ձայն բառբառոյ յանապատի»: Ինչո՞վ պէտք է բացատրուի այս կեղծաւորութիւնը, ինչո՞ւ քաջութիւն չունինք՝ պարզապէս խոստովանելու դառը իրողութիւնը, թէ մենք մեր աշակերտներին ծեծում ենք, որովհետեւ մեր խիղճը և մեր հմուտութիւնը այդ է թելադրում միզ: Ահա երիտասարդ ուսուցիչը՝ անկեղծութեան օրինակ է տալիս, և անշուշտ պատիւ է իրան, որ չի սքողում իւր խորհուրդը. նա առանց թաքցնելու ասում է, թէ իմ փորձերս ինձ համոզեցնում են, որ մեր դպրոցներում ծեծը անհրաժեշտ է:

Վաղուց ժամանակ էր, որ մեր ուսուցիչները բանային իրանց լեզուն և առանց քաշուելու քարոզէին իրանց սրտի թելադրածը: Գուցէ այժմ սկսեն մեր ուսուցիչները քիչ ծեծել կամ բնաւ չը ծեծել, երբ որ նոքա վստահութիւն են առնում անլուր բաներ քարոզելու, մինչդեռ նոքա ծեծելով ծեծում էին, երբ որ այդ վստահութիւնը չունէին: Այս այնքայն ըստոյգ է, ինչպէս և այն ակնյայտի ճշմարտութիւնը, թէ մինչև որ հիւանդը իւր հիւանդութիւնը չը խոստովանի, չը կայ նորա համար և բժշկութիւն:

Այսպիսի զարմանալի փոփոխութեան մի փառաւոր օրինակ ունինք: Յիշենք Տիխոսի մէջ գումարած ընդհանուր ուսուցչական Ժողովը: Ո՞վ է մոռացել այն բազմաոյոյզ երեկոն, երբ որ

անթիւ ուսուցիչների ակմբի մէջ բարձրացաւ պ. Բէգ-Նազարեանը (այժմ արժանապատիւ Տէր Սարգիսը) և իւր հաստաբաստ ձայնով ու հատու հատու խօսքերով ներբող կարգաց ծեծին: Նա այն ժամանակ իւր բազմաթիւ ունկնդիրների սրտից խօսեց և նոցա ծածուկ գաղտնեաց թարգման հոնդիսացաւ, այնպէս որ մենք սպասում էինք, թէ նորան կը վարձատրէն ուսանաներով: Բայց, տե՛ս արդարութիւնը, նորան բարոյապէս քարկոծեցին և իրանց սիրած դաղափարներն ուրացան: Չը նայելով, որ մարդիք ուրացան և քարկոծեցին, այն ժամանակից յետոյ մեր դպրոցներում ծեծը չը պակասեցաւ, բայց ինքը ծեծ քարոզողը բոլորովին փոխուել է. նա այժմ ոչ թէ ծեծ, այլ ոչ թէ պարթի թոյլ չի տալիս ներսիսեան դպրոցում: Մենք չը պէտք է զարմանանք հայ ուսուցչի Ժայռայեղ-Մեանց խեղճ, բայց գանձ մեր երիտասարդ ուսուցչին, որ աշխատում է իրան ճնշող մտատանջութիւնների համար մի ելք գտնել: Եւս յոյս ունէի որ իմ ասպարիզում յաջողութեամբ գործելու համար կարող եմ պատրաստուիլ, կարգալով գոնէ մանկավարժների և հոգեբանների հետազօտութիւններ, բայց երկամեայ փորձը ցոյց տուեց, որ միայն գրքերը բաւական չեն, պէտք է փորձառութիւն: Ես այժմ ուշի ուշով հետեւում եմ այն բոլոր դէպքերին ու պատահմունքներին որոնք տեղի են ունենում մեր դպրոցում և ընտանիքի մէջ. բայց ցաւելով պիտի խոստովանեմ, որ շատ անգամ անկարող եմ լինում ինձ համար պարզել շատ երևոյթների պատճառները . . . : Ես համոզուած եմ, որ ամենափորձուածն էլ թե՛ Գալլիէրի-Բաւար-կած պայմաններով, որ յարմարեցրած է Եւրոպացուց ուսումնարաններին, չի կարող մեծ յաջողութիւն ունենալ: Մի խօսքով նա սւգում է ասել, թէ Եւրոպայում կարող են առանց ծեծի ուսուցանել և կրթել, իսկ տեղական հանգամանքների շնորհիւ այդ գաղափարը մեր կեանքում չի իրագործվում:

Ո՞վ գիտէ, քանի ուսուցիչ կան, որոնք նոյն կարծիք ունին Եւրոպայի մասին. մինչդեռ ծեծի խնդիրը նոյն է, թէ այն տեղ և թէ այստեղ: Միթէ արեգական լոյսը զուարճութիւն չէ՞ մեզ համար, ինչպէս որ նոցա համար է: Միթէ ծեծը մեզ համար

ցաւ չէ՞, ինչպէս և նոցա համար: Ապա ուրեմն ծեծի լուծումն էլ մէկ պէտք է լինի երկուսիս համար: Մարդիկ հէնց այն պատճառով ծեծ են ընտրել, որ դա ընդհանուր պատիժ ու պատուհաս է ամենայն զգացող էակի համար:

Մէկը բարեմոռութեամբ գրեց, թէ Զուլիցերիայում մանուկները կրթվում են լաւ և առանց ծեծի միջնորդութեան, իսկ միւսները այդ բանին հաւատացին միամտաբար: — Ֆրանկոպրոսական պատերազմի ժամանակ մենք կհնում էինք Գոթայում մի ուսուցչի տանը, որի կինը Զուլիցերացի էր: Սա կատարեալ զաւակ էր Զուլիցերիայի. մի գեղջկուհի այն ամենայն սնապաշտութիւններով — ինչ որ մի լեռնակունք և կով արածեցնողը պիտի ունենայ, հաստ ձեռքերով և մեծ մեծ ոտքերով մէկը մշակութեան համար, միւսը շատ ման գալու համար: Բայց առ հասարակ քաջաւոյժ՝ թէ ֆիզիքապէս և թէ դատողութեամբ: Թէպէտ Գոթայի դքսութիւնը իւր հայրենիքը չէր, բայց նա կարգւում էր տեղակոն լրագիրը ծայրէ ի ծայր, մանաւանդ շատ էր զբաղեցնում նորան իւր բնակած փոքր քաղաքի ասակօսէքը և բամբասանքները: Մի խօսքով ամենայն կողմից մեզ պէս մի հասարակ մահկանացու էր: Այնու ամենայնիւ, արդարեւ զարմանալի էր այս կնոջ վարմունքը իւր զաւակների հետ և առհասարակ սորա կրթական հանճարեղ շնորհքը: Ինքը տան աղախին, լուսցարար և խոհարար էր միանգամայն, բաւական մեծ ընտանիք ունէր բայց և այնպէս ոչ մի գործ նորան չէր մոռացնել տալիս իւր մայրական ամենամանր պարտականութիւնները: Յանկարծ, տեսնում ես, այդ բազմազբաղ կինը խոհանոցում իւր գործը թողած՝ տուն է վազում, որ սեղանի վերայ մոռացած մկրտուր, լուցկին կամ թանաքը հեռացնի, որպէս զի մանր տղայքը չբկտրեն ձեռքը, չբխանձուին կամ չաղտոտուին: Որքան էլ որ սիրով զբաղուած լինի հիւրի հետ, նա միշտ յիշումէ, թէ զաւակների ունի, ուստի և նորա ականջը և աչքը սուր լիւում և տեսնում է, թէ արդեօք իւր օգնութիւնը, խրատը, քաջալերութիւնը հարկաւոր է իւր զաւակներից մէկին կամ միւսին, որոնք զանազան սենեակներում ցրուած՝ ով գիտէ թէ նոցանից որը ինչ է խաղում կամ գործում: Նորա բնակարանի

այցելողը իսկոյն կը նկատէր տան տիկնոջ մաքրասիրութիւնը և անպաճոյճ գեղասիրութիւնը, ձեռքի աշխատանքի ճոխութիւնը, ամենի գոհութիւնը և գողտրիկ զաւակների գերմանական չոր բարեկրթութիւնը: Մանուկները զուարթ, ուրախ, իրանց հասակից աւելի համեստ և խելօք էին, և առհասարակ ամենայն հոգացող խնամքներով սնուցած:

Նորանից մեծը, այն ինչ ուսումնարանից կը վերադառնար, իսկոյն գնում էր և մօրը ուրախացնում էր ուսումնարանի նորութիւններով: մայրը հարցմունքներ կը տեղար, մինչև որ որդին իւր նոր տպաւորութիւնները, այսինքն ուսումնարանում բոլոր սովորածները՝ մի առ մի և գեղեցիկ կերպով նորոգում և կրկնում էր: Մենք վերջը հասկացանք, թէ այս կինը ոչ թէ լոկ հետաքրքրութիւնից դրդուած այնքան բաներ է ուզում իմանալ, այլ այդ դիւրին ճանապարհն է ընտրել, որպէսզի, աւելի լաւ տպաւորել տայ իւր որդու գլխի մէջ բոլոր ուսածները, և նա չէր սխալվում, որովհետեւ երեկոյեան սերտողութեան ժամանակ՝ մանկան բոլոր պարապմունքները իրօք շատ դիւրանում, կարճանում և յաջողում էին: Երբեմն մայրը ամենայն ինչ շփոթում էր, զոր օր. Մովսիսի պատմութեան մէջ կցում էր Յեսուի պատմութիւնը, կամ մի գետին հոսեցնել էր տալիս դէպի արեւելք՝ մինչդեռ նա դէպի արեւմուտք է ուղղվում, ինչպէս որ այս ամենը նորա զաւակը երեկոյեան սերտողութեան ժամանակ իւր դասագրքերից ստուգում էր. բայց այս կրկնակի աշխատութիւնը փոյթ չէր մօր համար: Թէ իւր ամուսինը և թէ մենք պատրաստ էինք նորան օգնելու այդ աշխատութեան մէջ, սակայն նա մեզ չէր դիմում ասելով. « Դուք, տղայ մարդիկդ, երբէք այնպէս ուսման սէր չէք կորոզ արծարծել մանկան մէջ, ինչպէս մենք, կանայքս, մանաւանդ դուք չէք ծեծէք, ուր որ մենք առանց ծեծի արդեօք կարող ենք ցոյց տալ. և փոյթ չէ, որ ես սխալվում եմ, ես գոնէ սովորեցնում եմ թէ ինչպէս պէտք է սխալը ուղղել. յետոյ երբ որ նա ուղղում է, ինքն էլ սովորում է, ինչ էլ սովորեցնում է »:

Պատահում էր, որ մեր ձեռքից ծխող գլանակը կառնէր, կը

մօտեցնէր իւր որդուն, գրեթէ կըխեղդէր ծխով և կասէր. «Ե՞րբ կըտեսնեմ քեզ, սիրելիս, որ գլանակը այսպէս բերանիդ երթեւեկես համալսարանը, կամ զինուորական համազգեստ հագած՝ սիրուն օրհորդների խելքը տանես», և խօսոյն այնպէս ջերմ համբոյր կուտար նորան, որ կարծես թէ քաջալերում էր նորան անմիջապէս ոկսելու այդ հրապուրիչ դիւցազնագործութիւնը: «Տիկին, ինչո՞ւ էք վաղօրօք գրգռում գորա քիմքը աւելորդ բաներով», — Թող սա գիտենայ, պատասխանում էր տիկինը, թէ ինչ որ այժմ արգելւում եմ, յէրոս, իրան արգելած չի լինի: Գուցէ մինչև անգամ այժմէն իսկ զզուի. դուք նայեցէք, թէ ինչպէս է խեղդովում ծխից:

Գոթան առաջին անգամ տօնում էր Սեդանի առման յաղթութիւնը, մենք էլ ամէնքս պատրաստուեցանք քաղաքի ճրագայոյցը և հանդէսը տեսնելու: Մայրը բոլոր զաւակներին մաքուր զգեստներ հագցրեց, նոցա ակունջին ֆրանսիացւոց գազանութիւնը պատմելով և գերմանացւոց դիւցազնութիւնը փառաբանելով, ի հարկէ ստոյգն ու երեակայութիւնը իրար հետ խառնելով: Վերջապէս սկսեց երկուսն էլ — Գաբրիէլն և մանուկին էլ զարդարել. «Տիկին, դորան, ո՞ւր էք բերում, ի՞նչ վայելք կը լինի դորա համար, երբ որ ձեզ էլ միայն աւելորդ նեղութիւն կը պատճառէ», — Սորա կեանքում գուցէ այսպէս պանծալի օր այլ ևօ չը կրկնուի, պատասխանեց նա. ես այնպէս կանեմ, որ երեկոյեան հանդիսից սա ամենից աւելի տպաւորութիւն դուրս բերէ: — Եւ իրօք, ուր որ աւելի բազմութիւն, աղմուկ, իրարանցում էր լսվում, որ աւելի լոյս, գոյն, գրոշակների ծածանում կայ՝ կինը այն կողմն էր վազեցնում իւր գրրկած մանուկին, միշտ նորան հազար ու մէկ բաներ թոթովելով մատներին, դէմքին, շարժումների և ժպիտի միջնորդութեամբ:

Մենք կարծես թէ հեռացել ենք մեր խնդրից. բայց ոչ, շատ մօտեցանք: Արդեօք այդ կինը պատիժ գործ էր ածում: Արդեօք Զուհիցերացիք մեր չափ վայրենի՞ են, — այս է մեզ հետաքրքրող խնդիրը: Խոստովանում ենք, այդ կնոջ ձեռքից երբէք չէինք տեսել ծեծ, թէպէտ ինքը իրան արդէն գերմանացի էր համարում, որոնք հռչակուած են իրանց ծեծով: Բայց դա

գործ էր ածում մի պատիժ, որ մեր թշնամուն չէինք ցանկալ, որ ուտէր. այդ էր նորա բարկութեան դէմքը և սաստական ձայնը: Երեւակայեցէք մի գեղեցիկ կնոջ մէջ Վիլհելմ Տէլլի սիրտը, երեւակայեցէք մի կատարեալ ֆուրիայ, որ իւր դէմքի ակնարկով կարող է եօթ խիզախ ասպատակողների ոյժերի վերայ դող ձգել. — ահա այն կինը կատաղութեան ժամանակ: Սա գերասանական խաղ չէր, այլ արդարեւ՝ կնոջ խառնուածքը այնպէս էր, որ բարկութեան ժամանակ կրակ էր թափում, իսկ ապա բոլոր սրտով հաշտվում էր և երկնքի հետ և մարդկանց հետ: Հիմա մտածեցէք, թէ այս պատիժը որքան ազդու պիտի լինէր մանր մանկանց համար, որոնք իրանց խելօքութեամբ և բարեկրթութեամբ գրեթէ մանկութիւնը կորուսել էին:

Մի օր մեր ուսուցիչը և տանտէրը մեր սենեակումն էր այն ժամանակ, երբ որ մենք զբաղած չէինք, այլ զրոյց էինք անում, և երբ որ ըստ սովորութեան մանուկները միւս սենեակում ազատութիւն ունէին խաղալու, ինչպէս որ ուզենային՝ Նոքս սաստիկ քրքջում էին, խնդում, ուրախանում էին, անդադար իրանց հօր անունն էին արտասանում՝ Xcvv B.... Xevv B.... Մոռացանք աւելացնել, թէ հայրը կուզիան էր (ոսպա. տողն): Յանկարծ ներսի սենեակից մի այնպէս ապտակի զարհուրելի հարուած լսուեցաւ, որ շօխկոցի, արձագանքը մեզ երկուսիս սարսափեցրեց: Մտանք այն սենեակը, ի՞նչ տեսնեցք. մեր առաջ պատկերացաւ մի Յուդիթ, որ ամենեին չէր խղճահարում իւր արարքից, գոհ էր իւր գործից, և աւագ զաւակը՝ ուշաթափ: Յուդիթը կիսաշունչ որդւոյ ականջից քաշելով, գոչեց. «Գնա՛, հօրդ պատմիր արարքդ և քաւիր մեղքդ»: Խեղճ մանուկը եկաւ փարուեցաւ հօր ծնկներին...: Բանից երեւեցաւ, որ փոքրիկ յանցաւորը իւր քոյրերի և եղբայրների առաջ ներկայացրել է հօր կուզը....

Ահա այն գոված Եւրոպան, ահա հռչակուած Զուհիերիայի զաւակը, որ նոյնպէս ծեծում և անգթաբար է ծեծում: Մանաւանդ չի արդարանում այդ ծեծը այն պատճառով, որ մանուկը շատ լսող էր և միշտ հնազանդութեամբ կատարում էր, ինչ որ իրանից պահանջում էին: Մի հրաման բաւական կը լի-

նէր, որ մանուկը խապառ թուլնէր իւր միամիտ խաղը, այն՝ որ մօր աչքում այնպէս մեծ յանցանք երեւեցաւ: Եթէ ուզեցնանք ճիշդ անուն տալ կնոջ արարքին, պէտք է նոյնը կոչենք Իւլիա-գարո-նի-ն: Եւ խելագարվում եմ, ասում էր նա, երբ որ իմ հաւատամքի երեք սրբութիւններից մէկը սրբապաշտեալ եմ տեսնում: Իսկ նորա երեք սրբութիւններն էին՝ Աստուած, Զր-նայի, հայրենի: Բայց այսպիսի անտեղի վարմունքով ևս՝ կիներ ցոյց տուեց, թէ լաւ է հասկանում մի ճշմարտութիւն: Ոմանք կարծում են, թէ աշխարհքից հարկաւոր է հանել ամենայն ցաւ, բայց այս սխալ է: Կայ ցաւ, որ շատ անգամ ազդու դեղ է չարչարուողի համար: Ուրեմն ոչնչացնելով ցաւը, այնու հնար չէք տալիս հիւանդին, որ բժշկուի: Խեղճ կինը կարծել է, թէ ահա հասել է ժամը, երբ որ հարկաւոր է բժշկել:

Մինք աւելի լաւ կանեմք, եթէ փոխանակ մեղադրելու կնոջը, տեսնենք, թէ ինչով է խրատական դորա գործունէութիւնը, որքան որ նկարագրուեցաւ: Այն տեղ կայ ցաւի գործադրութիւն, որ սաստկագոյն ցաւը վերապահուած է ամենալուրճաւոր դէպքերի համար (երբ որ ուռնակոյն է լինում հաւատամքի պատուէրը)։ Բայց այն անդ կայ նմանապէս ամենամեծ հոգացողութիւն, որ կարելւոյն չափ բանը համի մինչև ի ցաւ: Իսկ մեզ կրմնայ համոզուելու, որ ցաւ ասելով, միայն ծեծ չը հասկանանք, և թէ շատ անգամ ծեծը ամենաօտարակազմայն ցաւ չէ:

Մի երիտասարդ ուսուցիչը նոյնպէս ցաւի գործադրութիւն է ուզում դպրոցում, բայց նորա ցաւը ծեծն է: Անշուշտ այս մի և նոյն բանը կասէին շատ ուսուցիչներ ևս, եթէ նոցա լեզուն չը պապանձուէր լրագրութեան սանձով: Տեսնում ենք այս կամ այն լրագրում հրատարակուեց Դաւիթ Զեյնի Դաւիթ, կամ Բաբարոս-նի-ն և այլ խորագիրներով յօդուածներ, որոնցով քննութեան ենթարկելով գործի ձիսական մասը, գալիս են այն եղբակացութեան, թէ միանգամայն վայրենութիւն է երեխաներին ծեծելը: Այդ յօդուածներում երբեք ի նկատի չի առնվում այն պատճառը, որ «սոսիալ Դեյ» (ուրեմն շատերի մէջ) յարուցանում է ծեծի գործադրութեան գաղափարը:

Հստ նկարագրութեան երիտասարդի, իրա ակնարկած պատ-
ճառը հետեւեալ իրողութիւններ են: Մեր ուսումնարանների
վիճակագրական տեղեկութիւններից երեւում է, որ 6851 մու-
նուկ ուսանողներ միջին դասակարգից են ծագել, նոքա զա-
ւակներ են վաճառականների, արհեստաւորների և երկրագործ-
ների: Մանկութեան ժամանակ նոցա ասում են Թութուշ Զան,
արա Թնւ, Պուպուշիկս՝ արա ախկ-Թնւ, ծեծիր Վարվառին,
քաշիր Յակորի մազերը ասա . . . (անվայել խօսք): Այնպէս
անբարոյականացածը քաղաքում էլ գտնում է իրա նմանե-
րին, և բարոյապէս փչացած, լկտի ու անպատկառ վարմունքը
նոցա ամենի բաժինն է դառնում: Նոքա ականատես են լի-
նում իրանց հօր և մօր կռիւներին, ծեծին, յիշոցներին, և նո-
քա էլ այս բաներով ոիրտ առած շատ անգամ բռուկացք են
բարձրացնում իրանց մօր վերայ. և տու հասարակ արդէն այդ-
տեղ սովորում են մեծերին չը լսել: Ահա սոքա են յետոյ աշա-
կերտում մեր դպրոցներում:—Ո՞վ կարող է հերքել այսպիսի
զարհուրելի նախակրթութեան իսկութիւնը, որ անշուշտ մեծ-
հոգսեր պիտի պատճառէ դպրոցի ուսուցչին: Բայց ի՞նչ է հե-
տեւում դորանից. միայն այն, որ գուցէ հայ ուսուցչից աւելի
ոչ ոք այնքան արթուն չը պէտք է լինի: Արդարեւ մեծ է առա-
քելութիւնը, մեծ է պատասխանատուութիւնը:

Իսկ ի՞նչպէս է զինվում հայ ուսուցիչը այս մեծ յաղթու-
թիւնը տանելու համար: Մենք կը շարունակենք համառօտել
երիտասարդի նկարագրութիւնը: Ուսուցչի դասախօսութեան
ժամանակ երկու աշակերտի մէջ կռիւ է բորբոքում, այնուհե-
տե մէկը վեր է կենում և բառ առ բառ կրկնում է իւր ընկե-
րոջ արտասանած անվայել խօսքերը: Արդ, ի՞նչ անէ ուսուցիչը
(միթէ չը ծեծէ, մտածում են շատերը):— Այսպիսի նկարա-
գրութեան մեծ պակասութիւնը այն է, որ մէջը չէ պատմուած
եղելութեան բոլոր հանգամանքները, որոնք խնդրի վերայ աւե-
լի լոյս պիտի օփռէին: Այստեղ ինքնին հարցմունք է առաջա-
նում. հապա ընչից ծագեց աշակերտների անուշադրութիւնը
դասի ժամանակ, որ նոքա կռուելու համար գործածեցին, ար-
դեօք ուսուցիչը շատախօս է, դանդաղ է պատմում, հետա-

քրքրութիւն զարթեցնել չի կարողանում, կամ անհասկանալի բացատրութիւններ է տալիս: Նախ այս տեսակ քննութիւններ պիտի անենք, որ յետոյ կարողանանք այն էլ հարցնել, թէ ի՞նչ անէ ուսուցիչը: Այժմ պատասխանը յայտնի է. նա պէտք է լաւ ուսումնասիրէ «շարժումներն» Գրաւեյուս Կոֆեքսական օրէնքները և փորձով վարժուի մանկավարժական շնորհ ստանալու:

Դասի ժամանակ այսպէս էր, ի՞նչ է կատարւում դասերից դուրս, հանգստեան միջոցին: Աշակերտները արտասանում են սովորած հայհոյանքների, վերակացուն զգուշացնում է: Մի առ ժամանակ յետոյ կրկնւում է աւելի վառ յիշոցաբանութիւն, վեցակացուն ուղում է քաղցրութեամբ մոռացնել տալ, յետոյ բարկանում է, ապա պատժում է. բայց այս բոլորը չեն կարողանում զսպել նոցա՝ որոնք որ արդէն վարժուած են մեծերին չըլսելու: Ի՞նչ անէ ուսուցիչը (արդեօք դարձեալ չըծեծէ): Կամ ուսուցիչը աշակերտին պատուիրում է մի բան անել, նա չէ կատարում, ուսուցիչը պատժում է, այս չի օգնում. միթէ չըհետեւի՞ այն խրատին՝ «որ ոչ լուիցէ ունկամբ, լուիցէ թիկամբ»:—Այս նկարագրութեան մէջ այնքան բաներ խառնուել են իրար հետ, որ հեշտ չէ խճողուած կծիկի թելերը ջոկ ջոկ զատել իրարից: Բայց աւելի լաւ կանենք, եթէ փորձենք ամբողջը մի քանի մասերի վերլուծել:

Ուսուցիչը քաջ գիտէ իւր աշակերտաց ընտանեկան կրթութիւնը, ուրեմն կարող է Գրաւեյուս, թէ նոցա խաղիւրդ առանց յիշոցների և լրբութեան չեն լինի, հետեւապէս Կոֆեքսական պէտք է հեռացնէ կամ ազնուացնէ այն առիթները, որոնք որ մղում են դէպի անառակութիւն: Բայց այս պատասխանը աւելի ընդհանուր նշանակութիւն ունի, այն ինչ կեանքի մէջ ամենայն ինչ մասնաւոր կերպարանք է ստանում: Եւ իրաւ, նախ պէտք է Գրաւեյուս Կոֆեքսական իւրաքանչիւր աշակերտի անհատական բնաւորութիւնը, բնական պէտքերը, հակումները, ըզձերը, ստացական սովորութիւնները, հանաք անելու կերպը, եղանակը և առիթները, բարոյական և ֆիզիքական ոյժը և այլն: Սակայն դիտելը դիւրին բան չէ: Ես և գուհեադիտակի մէջ այն ամենայն չենք տեսնի, ինչ որ աստղաբաշխը որոշակի և նրբութեամբ

Նկատում է. որովհետեւ նա գիտէ, թէ ի՞նչ հանգամանքներ կարեւոր են համարվում գիտելու ժամանակ. իսկ ինչ որ նորա համար ամենամեծ կարեւորութիւն ունի, այն մեր աչքում լոկ անխորհուրդ կէտեր և գծեր պիտի երևան, հետեապէս անուշադիր պիտի թողնենք նոցա, Ամեն մարդու բան չէ գիտելը. առաջ հարկաւոր է սովորել, թէ ի՞նչ բան պէտք է գիտուի, որ հանգամանքը ինչ խորհուրդ ունի, իսկ այս նպատակի համար պէտք է ուսումնասիրել ասէ՛ղջ հոգեբանութիւն, ասէ՛ղջ մանկավարժութիւն:

Այս նկարագրութիւնից երևում է, որ մեր ուսուցիչները մի կարգ են պահպանում իրանց գործ դրած միջոցների մէջ, նախ քաղցրութիւն, ապա բարկութիւն, յետոյ պատիժ. իրաւամբ են այդպէս վարվում: Բայց ինչո՞ւ համար Բարձր Պաշտօնէր գործ դնելուց յետոյ, նոքա ձեռնթափ են մտում: Անշուշտ նկարագրութեան մէջ դարձեալ մի բան պակաս է, որով զգուշացնում ենք նկարագրած անյաջողութեան ստոյգ պատճառը իմոնալ: Անժամանակ քաղցրութիւնը և անժամանակ բարկութիւնը՝ երկուսն էլ միանգամայն անօգուտ բաներ են. երբ որ նապաստակը անց է կենում՝ պէտք է անմիջապէս յետեւից գրնտակը արձակել, ապա թէ ոչ՝ կամ վաղ կլինի, կամ ուշ: Եւ վերջապէս, միթէ՞ խնդիրը միայն քաղցրութեամբ և բարկութեամբ կը լուծուի. ամէնից հարկաւորը այն է, որ ուսուցիչը անսխալ կերպով իմանայ աշակերտական վարքի շարժառիթը, և այնպէս աշխատէ միայն բաց դուռը փակելու: Որքան զանազան են այն զգացումները, որոնք խթանների պէս դրդում են մեզ գործելու և որոշ ուղղութեամբ վարուելու. դոցանից իւրութեանցիւրը թէպէտ տարբեր պատճառ է՝ բայց այնպէս կարող է գայթակղել աշակերտին, որ նա անխտիր կերպով կը կոչուի անսպասելի: Մենք ամէնքս գիտենք, թէ անուղղայութիւն կայ աշակերտաց մէջ, բայց արդեօք պարզե՞լ ենք մեզ այն հանգամանքը, թէ որքան զանազան են անուղղայութիւնները, որոնցից իւրաքանչիւրը զանազան աղբիւրներից է բղխում: Այս տեղ ուղիղ միջոց ընտրելն և յարմար ժամանակին գործ դնելն՝ հրաշալի արուեստ է, որ հարկաւոր է ամենայն ուսուցչին:

Այնուհետև որքան որ ուսումնասիրենք դպրոցանոց հոգեբանա-
 թիւնը կամ մեր մէջ ներգործող շարժառիթների խաղն ու ընդ-
 դիմահարութիւնները, այն երբէք աւելորդ և շատ չի լինի,
 որովհետև այդ մասը ամենից աւելի շփոթն է հոգեբանութեան
 մէջ և ամենից աւելի կարևորը՝ գործնական հոգեբանի համար:
 Վերջապէս նկարագրութեան մէջ մի երրորդ հանգամանք էր
 յիշուած՝ կամաւոր անհնազանդութիւնը, քննաստութիւնը, յա-
 մառութիւնը: Սա էլ վերևի աղբիւրներից է ծագում, և ապա-
 ցոյց է, թէ ուսուցիչը արդէն կորուսել է կամ բնաւ չի ունե-
 ցել հեղինակութիւն: Հեղինակութիւն ձեռք բերելու համար գի-
 տութիւն չըկայ. դա պէտք է մարդու մէջ ինքնին լինի, մարդ-
 անձամբ պէտք է կրթուի: Հեղինակութիւնը ոյժ է, զօրութիւն
 է, Ֆիզիքական ոյժն էլ մի ոյժ է, իսկ մեր ասածը աւելի բարո-
 յական ոյժ պէտք է լինի: Եթէ աշակերտը զգայ, թէ իւր առաջ
 կանգնած է մի մարդ, որ գիտէ և կարող է միշտ բարին, օգ-
 տաւէտը, յարմարը ընտրել, որ ամենայն տարակոյս խելացի
 կերպով լուծում է, որ ամբողջ դասատունը այնպէս հմուտ-
 թեամբ է պահպանում՝ ինչպէս կառապանը մի քանի զոյգ կա-
 տաղի ձիանը, որ երբէք չի ուշանում, չի շտապում, չի շփոթ-
 վում, չի վարանում, որի այոն՝ այո է և ոչն՝ ոչ, որ բնաւ չի
 զղջում իւր արարքներից և ամաչելու պատճառ չունի—այս-
 պիտի մարդուն կորոնդ է նա չը լսել: Ասում են, թէ կան մար-
 դիկ, որոնք իրանց հայեացքով շարժեցնում են առիւծներին և
 ամենաթուհաւոր օձերին. այսպէս է և հեղինակութիւնը իւր
 զօրութեամբ: Մի բազմութեան առաջ, մի ամբօխի առաջ, ինչ-
 պէս որ դասատունն է, հեղինակութիւն ունենալը՝ նշանա-
 կում է ամենայն յաջողութեանց գրաւականը ունենալ. իսկ
 հեղինակութիւն կորուսանելը՝ նշանակում է ամենայն ինչ կո-
 րուսանել:

Մենք տեսանք, թէ մեր ուսուցիչները քանի տեսակ ինքնա-
 մուրթութիւններով են ապրում, նորա զոր օր. կարծում են, թէ
 Բալայի Դիպիեր գործ են գրել, իրանց մնում է միայն ծեծի գոր-
 ծադրութիւնը: Մենք կարծում ենք հակառակը. մերօրը բոլոր
 միջոցների մասին գաղափար չունին, բայց Զէյթուն էս, Դիպի, տե-

դի և անտեղի: Եւ երբ որ ծեծը այսպէս ընդարձակ գործող-
րութիւն է ստացել, որքան հետաքրքրական բան է, որ նորա
մեզ անկեղծութեամբ տեղեկացնեն, թէ ի՞նչ օգուտ և ար-
դիւնք է ստացուում ծեծից:

Սակայն մեր ուսուցիչների ինքնամոլորութեան և անձնախո-
բութեան գլուխը հետեւեալն է: «Մեր մանկավարժները միշտ
առաջարկում են ամենաթիթեւ պատիժներ. բայց թէ՛ որքան է
յաջողվում այդ ձևով կարգապահութիւնը մեր դպրոցներում
այդ փոքրիկ գիտէ իւրաքանչիւր ուսուցիչ»: Փորձով խօսելը բաւա-
կան զօրաւոր փաստաբանութիւն է, բայց ափսոս, որ ամենայն
փորձ՝ փորձ չէ: Մեր ուսուցիչների փորձը այն միամիտ մար-
դու փորձն է, որ դարձնութեան արուեստին անտեղեակ գոյալ
բոլոր մոլորները կարգաւ փորձում է, և ոչ մէկով չի կարողա-
նում տաքացած երկաթը ծեծել. նա մոլորները մի առ մի շարժ-
ողում է բացականչելով. «այս չափուն էլ բանի պէտք չէ»:

(Շարահանկելի)

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ.

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ.

(Շարահանկելի)

Խ.

Սուրբ Խաչ վանքը և եկեղեցին. Ձեռագիր ճապեան. Եկեղեցի քա-
ռանքը. Ժողովարարութիւն յօգուտ եկեղեցու հասանցան. Եկեղեցու
օթոն. Վանքի վերադասութիւն և վանահայրերը. Տնտեսութիւն. Ու-
րաքանցութիւնը հին և նոր ժամանակ. Ուրաքանքները Սուրբ Խաչ
վանքում. Նախնիք. Խարաղանը Աստուծոյ պաճարում. Սուրբ Եղի-
ձնին հասանելի ճապը. Մարմն և ճոթի հասցաւարանները. Արքեպի-
սկոս:

Եւ արդէն կանգնած եմ Արքեպիսկոս Սուրբ Խաչ վանքի տակ:
Տեղը բոլորովին ամայի է և շուրջը քարակոյտներ երկար տա-
րածութեամբ: Դէպի հարաւ 4—5 վերստ հեռաւորութեամբ